

M. Archam Poste Restante
Athènes (Grèce)

ՏԱՐԵԿԱՆ Յրանք 4

ՎԵՏՍՄՍԵԱՅ « 2

ՄԻՈՒԹԻՒՆ

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ե. Տ Ա Ր Ի

ԱՌԷՆՔ . 1900

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր

Թ Ի Ի 41

ԱՌԱՋԱՐԿՈՒԱԾ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ

ԳՈՅՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Այսպիսիս ամեն կողմերն, ուր որ բնակություն հաստատած է մարդկությունը, ըլլայ քաղաքակիրթ, ըլլայ կէս վայրենի կամ բոլորովին վայրենի, ամենքն ալ ցեղերու ազգերու բաժնուած, իրենց բնական երկիրներու, հաստատութեանց և ստացուածքի բացարձակ տէրերը դարձած են: Թէ ինչպէս աշխատեալ և ինչպէս կարողացեր են ձեռք բերել իրենց իրաւունքները: Պատմութիւնը ցոյց կուտայ մեզ, որ առ հասարակ ամենքն ալ անձնազոհութեամբ կատարել կուի մղելով, հաղաւոր զոհեր տալով, արիւնով և դրամով տիրացեր են ազատութեան, ու այսօր իրենց գոյութիւնն պահպանելով մարդկային բոլոր իրաւունքները կը վայելեն: Միայն գերի ազգերն են որ մարդկային վայելչութիւններէ զսերկ մնացած են: Անոնք չունին իրենց համար սեփական երկիր. չունին քաղաքական իրաւունքներ. օտարի տունը կը բնակին, օտարի հաճոյկատար ծառայութիւններ մատուցանելով, գլուխ հակելով ստրկութեամբ միայն կարող են պատառ մը հաց ճարել և քաշկուտել իրենց անտանելի կեանքը:

Ասոնց մէջ կը գտնուինք դժբաղդաբար մենք հայերս՝ անճրկած, ձեռքերնիւ ծալած իւրաքանչիւրս մի անկիւն քաշուած, մեր յոյսը Եւրոպայի վրայ դրած՝ յիմարաբար կը սպասենք որ հրաշքով մը դան մեզ փրկեն:

Երբ մենք կը շարունակենք մնալ անմիաբան, անշարժ, անտարբեր և ինքնօգնութեան միջոցներով մեր անջատ ուժերը ի մի ձուլելով չենք ուզեր գոյութեան կուի մղել. ինչ կը յուսանք այն Եւրոպացիներէն, որոնց քթին առջև հարիւր հազարաւոր անպաշտպան հայեր իրենց բախտին թողուած անխիղճ վայրենիներու սրին ու բրին յանձնուած ջարդուեցան ու գառան պէս մորթուեցան: Միթէ՞ կարող չէին հեռագրական հրամանով մը վայրկեանապէս դադրեցնել կոտորածը. անոր համար չըրին իբր թէ համաձայնութիւն գոյացած չէր իրենց մէջ: Ինչպէս ուրեմն անհամաձայն Եւրոպացիները առանց երկար բանակցութեան իսկոյն միանալով համերաշխութեամբ Չինաստանի վրայ քաշեցին. որովհետեւ Հայաստանէն այնքան խոշոր պատառներ չէին ակնկալել, որքան Չինաստանէն:

Մեծ պետութիւններու տիեզերագրաւ քաղաքականութեան ինչպէս կը տեսնուի, Արեւելեան խնդրոյ լուծումը դեռ չառ երկար տա-

րինքն պիտի տեսէ, հետեւաբար վայրագ թուրքը պիտի շարունակէ իր սովորական հայաջինջ քաղաքականութիւնը առաջ տանիլ, մինչեւ որ փճացնէ հայ տարրը, այն աստիճան որ Հայաստանի և սչ մի նահանգին մէջ մեծամասնութիւն չի կազմելով իսպառ զրկուինք ինքնավարութիւն պահանջելու իրաւունքէն:

Այս պարագային՝ հայերս ինչ կը մտածենք մեր գոյութիւնը պահպանելու համար: — Ժամանակը չէ՞ արդեօք կուսակցական խռուրդութիւնները բառնալ, եղբայրասպան կոիւնքերու վերջ տալ, իրարու մօտենալ և մեր նիւթական ու բարոյական ոյժերը ի մի ձուլելով գոյութեան կուի մղել, որպէսզի գէթ մեր ապագայ սերունդը իր նախահայրերու (մեր) արիւնով ծախու առնուած ազատ Հայաստանի մէջ ապրի իբր ազատ մարդ:

* * *

Ազգային ներկայ տագնապալից դրութեան մէջ, մեր բաղձաքանչն պատակին հասնելու միակ միջոցը ընտրեցինք Ազգ. համագումար ժողով մը գումարել: Ուր պիտի հրաւիրուէին յեղափոխական կուսակցութեանց գլխաւոր ներկայացուցիչներ, չէղոք դասակարգի պտականող փորձառու, հեռաւան, անկեղծ և անկողմնակալ անձնաւորութիւններ որոնք նկատի պիտի առնէին Հայ Յեղափոխականութեան հետ առնչութիւն ունեցող բոլոր խնդիրները, անոնց թերի կողմերը և եղբայրասպան աննպաստ կուիւնքերու շարժառիթը: Նաղարբէկի և Յրփիարի խնդիրները պիտի կարգադրուէին, կուսակցութեանց ծրագիրները քննութեան ենթարկուելով բարեփոխումներ պիտի կրէին: Համագումար ժողովը պիտի գծէր մի նոր ուղղութիւն Հայ Յեղափոխութեան, պիտի որոշէր անոր քաղաքական ընթացքը, յարձակողական կամ պահպանողական դիրք բռնելը: Կուսակցական ըսի ըսաւ ներու, չարախօսութիւններու յանրաւի ամբաստանութիւններու վերջ մը պիտի տրուէր: Բախտախնդիր, ղեղձանող, կեղծարար յեղափոխականները ազգ. հրապարակէն պիտի տրտաքսուէին, մաքուր ապրելէ բաղկացեալ իսկական յեղափոխականներու կուսակցութեանց միջև հաշտութիւն կնքուելով եթէ ոչ հիմնական միութիւն, գէթ համերաշխութեան կապ մը պիտի գոյանար: Հրապարակի վրայ վստացող հայհոյիչ, ամբաստանիչ, այս կամ այն կուսակցութեան շողորորոգութիւններ չաւլով կողմնակալ թիրթիրը (աննշան բացառութիւն մը յարգելի է) յիփսանակ անմիաբանութեան սերմեր ցանելու, անհատական փուռ խնդիրներով ժամովաճառ ըլլալու, ժողովուրդին սուտ ու փուտ յիմար խոստումներով օրօր կարգալու, անոր սրտին մէջ թափանցելով հայրենասիրութեան ու վրէժխնդրութեան զգամումները պիտի արթնցնէին և լոկ ազգային կեանքով պիտի

զբաղէին:

Համագումար ժողովը՝ բացի կուսակցութեանց վարչութիւններէն (եթէ հիմնական միութիւնը անկարելի դառնար) պիտի ընտրէր մի նոր վստահելի, ձեռնհաս բարձրագոյն մարմին, որ ոչ միայն կուսակցութեանց ելմտական գործերու, յեղափոխական շարժումներու և այլ գործառնութեանց վրայ իբր համարառու մարմին հսկելու իրաւունք պիտի ունենար, այլ Եւրոպայի մէջ պիտի ճանչցուէր ընդհ: հայութեան քաղաքական ներկայացուցիչը, այնպէս որ ազատ համարձակ պիտի կարողանար ի հարկին մեծ պետութեանց դիմումներ ընելով, չըջաբերականներ զրկելով ազգային Սուրբ Դատը դիւանագիտորէն պաշտպանել:

Համագումար ժողովի կարգադրութեամբ պիտի ունենայինք երաշխաւորեալ գանձանակ մը, նոյն վստահելի մարմնոյ միջոցաւ ազգին անունով Եւրոպական Պանքի մը մէջ դրուած. — ամեն հայ անհատ ըլլայ հարուստ, ըլլայ աղքատ, ըստ իր կարողութեան պիտի փութար իր բաժինը վճարել ի նպաստ Ազգ. Մեծ Գործին, վստահ ըլլալով որ իր վճարած դրամի վերջին սանթիմը իսկ պիտի գործածուի բուն նպատակին, և ոչ թէ ձրիակերներու բաժին պիտի լինի, ինչ որ պատահեցաւ անցելոյն մէջ, և մինչեւ օրերս դժբաղդաբար կը շարունակուի նոյն դրութիւնը:

Ահա այս բոլոր անտեղիութեանց միանգամ ընդ միշտ վերջ տալու, Միութեան փրկարար դրօշին ներքեւ համախմբուելով, ձեռք ձեռքի տուած, մի ոյժ, մի բանակ կազմելու բարի նպատակով առաջարկուեցաւ Ազգ. համագումար ժողովի գումարումը, որուն յաջողութեան համար ամեն ջանք ի գործ դնել՝ բոլոր հայերուս նուիրական պարտականութիւնն է, եթէ իսկապէս կը փափաքինք մեր բաղձանքները պսակուած տեսնել մօտալուտ ժամանակի մէջ:

* * *
Ինչպէս յայտնի է, պ. պ. Մինաս Չերազ և Կ. Բասմաջեան՝ վերակազմ. Հնչ. կուսակցութեան և Տիար Փորթուգալեանի մասնաւոր նամակներով Համագումար ժողովոյ մասնակցիլ առաջարկած էին, որոնց պատասխանները մեր անցեալ թուով հրատարակած էինք:

Տեղի սղութեան համար այդ լակոնական պատասխաններու մասին մեր կարծիքները «Միութիւն»ի յաջորդ թուով:

Մեր յարգելի այն ընթերցողները, որոնք մեզ հետ հաշիւ ունին, եթէ կը բաղձան «Միութիւն»ի գոյութիւնը պահպանել, կը խնդրենք որ փութան իրենց պարտքը զրկել խմբագրութեանս:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՏԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Անկողմնակալութիւնը պարտք կը դնէ մեր վրայ, հայերու Տրէյֆիւսը պաշտպանող հետեւեալ յօդուածը հրատարակել:

Պարոն Արշամ

Արիւիտարի դէմ եղած ամբաստանութեանց համար պ. պ. Խաբէնտէրի և Յակոբեանի առաջարկած Ընկերային Ատենին մասին կարծիքս ու համոզումներս կը հարցնէք:

Բնաւ յաւակնութիւնը չունիմ վճռակալնօրէն բան մը ըսելու արհեստի խնդրոյ մը համար, որ անհատականէ կուսակցական ու կուսակցականէ՝ հանրային, մեզի համար այսօր ընդհանուր ազգային խնդիր մը եղած է: Թէ Արիւիտար լրտես մը, մատնիչ մը եղած է թէ ոչ, պէտք չէր բնաւ մտքերը յուզէր այս աստիճան, եթէ Արիւիտարի անձը այնքան երկար ժամանակէ հետէ մեր հանրային կեանքին, մեր բուն ազգային-քաղաքական ներքին կեանքին հետ մօտէն, խիստ մօտէն կապուած ու անսր հետ անմիջական աւերչութիւն մը ունեցած չըլլար:

Այս տեսութեամբ, ամեն հայ անհատ, ըլլայ կուսակցական մը թէ չէ՝ անձնաւորութիւն մը, յեղափոխական մը թէ պահպանողական մը, պարտաւոր է քննել այդ խնդրոյն հետ աւերչութիւն ունեցող իրերը և երեւոյթները խզի մտքը, խորագննին կերպով ու կատարեալ պաշարիւնութեամբ:

Ինչպէս անհատական ու ընտանեկան, նոյնպէս ալ հանրային կեանքի մէջ կրնան մարդիկ գործել մեծամեծ սխալներ ու նոյն իսկ ոճիրներ. կրնան գժուծ, ստորին ու սոսկ անձնակալ անհաշիւներ՝ մղել անհատը օտարաշէնութեանց. մոլթին մէջ սարքուած էնթրիքներու ու սեռգի զրպարտութեանց. առաջին թէ երկրորդ պարագային ալ, ըլլայ ատիկայ անհատական, ընտանեկան ու հանրային կեանքին վերաբերող, ընկերութիւնը պէտք է ինքնապաշտպանութեան զօրաւոր դէմք մը ունենայ, առանց որուն, մարդիկ տարտարոսեան թահուրոհի մը, դժոխային լաիւրիւթիւթոսի մը մէջ գազանային կեանք մը պիտի ունենային — և այդ դէմքը օրէնքը, բարոյական օրէնքն է:

Հաւատարմութեան յետոյ վտարիւն կը ներկայացնէ անարդարութեան, ոճիրներու ու քմահաճոյքի թատերաբեմը: Ըսէք, խնդրեմ, ինչ նշանակութիւն ունին խաւարային ու աներեւակայելի ոճիրներու, համարադրկային վայրագութեանց թաւրը եղող թուրքիա կոչուած այդ օրհասական, նեխալ ու փտած հրկիւն մէջ բարոյականութիւնը, օրէնքը, հաւաքական իրաւունքը, արդարութեան սկզբունքը:

Հայ ընթերցողներու համար — աշխարհի ո՛ր ծայրը ու ո՛ր պնկուն ալ գտնուին անոնք — աւելորդ յոգնութիւն մըն է ապացուցանել այս բանը. երկրին ամենազգի միլիոնաւոր զաւակները այդ անարդարութեանց ու այդ վայրագութեանց զոհն են ու յաւիտենապէս կը հեծն անոր հրէշային ըզրիմին տակ: Այդ ըզրիմը, ճնշողական այդ միջոցները, արդարութեան յաւիտենապէս չիղոյումիւնն է, որ թուրքիան կազմող զանազան ցեղերուն մէջ Անհատականութեան,

Ազգայնութեան ու Յեղափոխութեան ոգին ծնուցած են. Եւրոպայի կողմը Հելլէն և Պալլադիան ազգերէն սկսեալ մինչև Ատիոյ կողմը ստրկութեան մէջ տանջուող աւ հեծող դժբաղդ Հայերս միևնոյն վայրագութեանց ենթակայ, միևնոյն յուսահատի պայքարը մղած են ու կը մղենք: Թուրքիայէն դուրս Եւրոպական ու Ամերիկեան ազգերու ու ժողովուրդներու մէջ ալ ճնշող ու հալածող ըզրիմներու և քմահաճոյքին դէմ Յեղափոխութիւնը գործած է, տապալած ու զարհուրեցուցած բռնակալ տարրը ու հռչակած Աղատութեան, Հաւասարութեան ու Եղբայրութեան գերագոյն սկզբունքը. մէկ խօսքով Յեղափոխութիւնը անհատական իրաւանց և Արդարութեան դժբաղդն է ու մարդկային ազգի գերագոյն Փրկիչը:

Արդ, հակասութիւն մը չի՞ պիտի ըլլար եթէ Յեղափոխութիւնը ինք զլանար ո՛ր է անհատի մը Արդարութեան իրաւունքը:

Նախորդ դարէն ի վեր պատմութիւնը կը ցուցնէ թէ Եւրոպա և Ամերիկա տեղի ունեցող մեծ յեղաշրջմանց մէջ, Պրանսան ցցուցած է միշտ մեծանշանութեան, անհատական իրաւանց, Արդարութեան և Բարոյականութեան սկզբունքը և ցնցած ու զղրդած ամբողջ աշխարհ, մարդկութիւնը մղելով քայլ մըն ալ աւելի առաջ դէպի արդարութեան իտէականացումը և հարուածը տալով ու կտոր մըն ալ փշրելով ընկերութեան նեխած մասէն:

89ի մեծ Յեղափոխութեամբը աւատականութիւնը, միջնադարեան բռնապետութիւնը դիւնորականութեան, պապին ու կղերականութեան անսահման կամայական իշխանութիւնը ջարդ ու փշուր խորտակեց, համաճարակ կրակի մը պէս բռնկցնելով ամբողջ Եւրոպան Արդարութեան ու Յեղափոխութեան բոցովը:

Պրանսային, մեծագործութեանց այդ երկրին վերապահուած էր դարձեալ 19րդ դարը փակել անհատական իրաւունքի և Արդարութեան պահպանման է՛ն մեծ, է՛ն նշանաւոր դասովը աշխարհ գրգռեցնելով ու անգամ մըն ալ ամբապնդելով Աղատութեան, Հաւասարութեան, Եղբայրութեան ու Արդարութեան սկզբունքը: Կղերական ու դիւնորական նուիրապետութիւնը և պուրժուազիին ձեռք ձեռքի տուած, ան իր խաչով՝ աս իր սուրով և միւսն ալ իր դրամով ու իր ձեռքին մէջի կառավարական ղեկովը կը սպառնային բար ու քանդ ընել 89ի այդ գերագոյն ըսկզբունքը և վերահաստատել միջնադարեան կամայականութիւնն ու անարդար բռնապետութիւնը: Մտաւորական Պրանսան, Յեղափոխութեան Պրանսան սակայն վերուց իր զլուխը ու համայն աշխարհ ցնցուցաւ:

Պատմութիւնը թերեւ չէ արձանագրած և չի պիտի արձանագրէ ալ Տրէյֆիւսի խնդրին նման մեծ դէպք մը: Պրանսայի պատերազմական գաղանի դիւանին դրասենեկի գործակալներէն մէկը պարութայ(

) մը կը յանձնէ օր մը, զոր ձեռք անցուցած էր Բարիդի գերմանական դեսպանատան դիւնորական կցարդ զնդապետ Շրվարձ-գօրընի սենեակին մէջէն, ուր ֆրանս. բանակին պառկանող սպայ մը պատերազմական և այլ

ներքին գաղտնի յատակագիծները կը մատնէր իր թշնամիին՝ Գերմանիոյ. Պրանս. պատերազմական նախարարութեան ու սպայական խորհուրդին համար տարակուսելու տեղի չկար. մատնիչ սպայ մը կար բանակին մէջ. պէտք էր օրէնքին բոլոր խրատութեամբը պատժել զանի: Հանրապետութեան նախագահ, պատերազմական պալատնատուն ու սպայակոյտ ամբողջ իրար կանցնին. կասկածները կը ծանրանան Տրէյֆիւսին վրայ, որ իսկոյն կը ձերբակալուի (Տրէյֆիւս առ միջոցին գաղտնի դիւանի մէկ պիւրօյին մէջ կցորդի պաշտոնը կը վարէր) փութոյ պնդութեամբ առաջ կը տարուին քննութիւնները ու Տրէյֆիւսը դատելու համար կազմուած պատերազմական խորհուրդին տեղեկաբերը կամբաստանէ զանի իբր հեղինակը՝ մատնիչը այդ պարութային, առանց սակայն ո՛ր է ապացոյց մը, փաստ մը ունենալու իր ձեռքին մէջ, մանաւանդ որ գրի փորձագէտները հակասած են ու չեն կրցած հաստատել պարութային գիրը Տրէյֆիւսին ըլլալը. նոյն դահլիճովուրդ դատարարութեան միջոցին ալ. ոչ ապացոյց, ոչ փաստ, ոչ արամբանութիւն, ոչ օրէնք ու բացարձակապէս ոչինչ, այլ սոսկ կեղծարարութիւն, սեռգի էնթրիքներ, անձնական կիրք ու ատելութիւն, դատապարտել, աշխարհի նշաւակ ընել և գողգոթայի տանջանաց ենթարկել կուտան անմեղ մը, զոհ մը: Ամբողջ Պրանսա ու անոր հետ ամբողջ աշխարհ «ի խաչ հան զդա» կաղաչակէ խեղդելով իր ունեւնեւորուն մէջ անմեղին բողոքի ձայնը. մէկ մարդ միայն կար, Տրէյֆիւսի պաշտպանը, փաստաբան Տրմանտ, որ դիտէր անոր անմեղութիւնը, բացթրէնքը անոր ալ բերանը գեյան դրած էր. նուիրապետական օրէնք մը կարդիւնք փաստաբանին, դատաւորին ո՛ր է գաղտնիք մէջ տեղ հանել, Ու Տրէյֆիւս կը զրկուի Սատանայի Կղզին, հոն տաժանքի ու չարչարանաց մահուամբ մը շուտով վերջ տալու համար իր մարտիրոսի կեանքին:

Արդարասէր սպայ մը կը գտնուի սակայն Պրանս. բանակին մէջ. գաղտնի դիւանին պետ դեր-գնդապետ Բիգար երեւան կը հանէ գործուած անարդարութիւնը, միևնոյն ատեն գտնելով բուն մատնիչին հետքը ու պատերազմական նախտար դորավար Պիլլոյի. սպայակոյտի պետ զօր. Պուատէֆրի և փոխանորդ զօր. Կոնսի ուշադրութիւնը կը հրաւիրէ արդարութեան գործած սխալին վրայ. բացարձակ հրաման ու արգելք կը դրուի իրեն այդ սխալը մէջտեղ հանելու. «բանակին պատիւը» վտարգուծած կըլլայ. անմեղին դատապարտութեան ատենուն պատերազմական նախարար դորավար Մէրսիէ, սղայակոյտ ու զոհը դատապարտող սպաները ան պատու ու ամբողջ կըլլան իբր իրենց սխալը խոսառուլին. ու Բիգարի պնդումներուն վրայ դորավար Կոնս կըսէ իրեն «ինչ, Բիգար, վերջապէս դուք չէք Սատանայի Կղզին մէջ չարչարուող ու հեծողը», սը իր ճակատը վերցնելով ու շնչաւի իր պետին՝ դորավար Կոնսի աչքերուն մէջ նայելով պատասխանած է «ինձի հետ գերեզման չեմ կրնար տանիլ աս դաղտնիքը»:

Դատին վերաքննութիւնը պէտք էր կատարուէր բանի որ անմեղ մը նշանակուած

Շատ տկար են ծիծեռնակներ, բայց խմբով կը ճամբորդեն գարնան ատեն ապահով. երբ գիւններ թռչուն տեսնեն, խմբովին Մեծ աղմուկով կը փախցանեն թշնամին:

Այդ աղմուկ մեզ կասէ. Մենք մինակ տըկար ենք.

Բայց երբ մէկտեղինք մենք արծիւն ալ կը վանենք:

Բնականէն գրուած է այդ մեծ օրէնք Որ տկարներ թէն չաւնին ոյժ ու ղէնք, Միանալով կը զօրանան, կը կռուին Եւ միութեան չղիմանար թշնամին:

Կը կրկնեն ձիւն, անձրեւ և տերեւ և թռչուն:

«Իմացէ՛ք, ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋՆ Է ՄԵՐ ՁՕՐՈՒԹԻՒՆ»:

Ա. Ր Մ Է Ն Ի Ա.

Գոհունակութեամբ կը տեսնենք որ Հնչ. Կուսակցութեան Ամերիկայի Նահանգային վարչութիւնը առաջարկուած Համագումար ժողովի գումարման օգտակարութիւնը ըմբռնելով հետեւեալ հրահրէրը հրատարակած է, յորմէ մի օրինակ ալ մեզ զրկուած ըլլալով հաճութեամբ կը հրատարակենք ի գիտութիւն հայ հասարակութեան:

Փափագելի էր մեզ, որ Դաշնակցական Պիւրոսներ, Կոմէտէներ և միւս կուսակցութեանց հետեւող մարմիններն ալ այս ամենակարեւոր հարցը՝ իբր օրուան խնդիր նկատողութեան առնէին:

Հ. Ր. Ա. Ի. Է. Ր.

ԱՌ. ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ԱՅԻՆԱՅԻՆ ՍԱՅՄԱՅԻՆ

Հայրենակիցներ

Ամերիկայի Հնչակեան Մասնաճիւղերու ԺԳՐԳ. Պատգամաւորական Ժառուղի (որ տեղի ունեցաւ վերջերս ի Փրովիտէնս), Զեր խնամոտ ուշադրութեան կը յանձնէ հետեւեալ որոշումը, զոր միաձայնութեամբ քուէարկեց իր շորորով նստին մէջ:

«Նկատելով որ Հայրենիքի շատ մը նահանգներուն մէջ տիրող սովը, հազարաւոր որբերու անխնամ վիճակը և վերջապէս ազգին ընդհանուր տառապեալ կացութիւնը յատուկ պարտաւորութիւններ կը դնեն իւրաքանչիւր հայու վրայ, մասնաւորապէս Արտասահմանի Հայութեան որ իր վայելած նպաստաւոր պայմաններուն շնորհիւ կրնայ մեծ դեր մը կատարել մեր թշուառ Հայրենեաց վիշտերը ամոքելու համար:

Նկատելով միտնգամայն ազգին ոյժերուն ներկայ պառակտեալ վիճակը հանգէպ իրաց այս տխուր կացութեան:

Պատգ. Ժողովը կորոշէ Ամերիկայի մէջ Ազգ. Հայրենասիրական Համաժողով մը կազմել, ուր հրաւիրուին ներկայ ըլլալ Յեղափոխական կազմակերպութիւններու ինչպէս նաեւ չէզոք հայրենասէրներու ներկայացուցիչները, հետեւեալ գլխաւոր նպատակներով:

Ա. Ամեն դասակարգի ազգասէր Հայոց մէջ, ղգացումներու և կարծեաց փոխանակութեան միջոց մը ըլլայ յօգուտ Ազգային փրկութեան գործին:

Բ. Ազգին ոյժերուն միացման արգելք հանդիսացող խոչընդոտներու բարձման վրայ մտածելով առ այդ գործնական միջոցներու դիմէ:

Ասով Ամերիկեան Հայ Գաղութը կը հրաւիրուի Ազգային Համաժողով մը կազմել Նոյեմբեր 3 և 4րդ օրերը Ուստի քաղաքի Ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովասրահին մէջ:

Համաժողովին նպատակը թէն համառօտիւ պարզուած է բանաձեւին մէջ, բայց ժողովը ազատ պիտի ըլլայ բարեփոխումներ կամ յաւելումներ ընել օրակարգին վրայ: Պատգամաւորական ժողովին գլխաւոր փափաքը եղած է որ ազգին ներկայ ճգնաժամին մէջ առաջարկուած այս գումարումը իրապէս համաժողով անուան արժանի հան-

գամանք ունենայ. — Ինչ որ կարելի է միայն կազմակերպեալ մարմիններու և ընդհանուր ժողովուրդին կողմէ ցոյց տրուելիք անկեղծ գործօն համակրութեամբ:

Այս նպատակին հասնելու համար Պատգամաւորական Ժողովը ոչ միայն կը թելադրէ, այլ՝ ընդհանրապէս կը յանձնարարէ որ ամեն կազմակերպեալ մարմին ներկայացուի Համաժողովին մէջ, որոց իւրաքանչիւրին կողմէ նշանակուած Պատուիրակներուն թիւը հինգէն աւելի չըլլայ: Յետոյ ժողովուրդին Ոչ-Կուսակցական մասը ամեն քաղաքի մէջ մասնաւոր ժողով գումարելով նոյն նպատակին համար ընտրէ Պատուիրակներ որոց թիւը իւրաքանչիւր քաղաքի համար երէքէն աւելի չըլլայ:

Աւելորդ է ըսել թէ Համաժողովը զուտ Ազգային գումարում մը պիտի ըլլայ, ուստի յարաւորական խտրութիւնները բացարձակապէս ունենալու չեն կրնար ունենալ Պատուիրակներու ընտրութեան մէջ: Կը խնդրուի որ այս մասին եղած բոլոր կարգադրութիւնները որչափ կարելի է փոխելով հայտնուին Նաչ. Վարչութեան, որ այս պարագային կը ծառայէ իբր կարգադիր մասնախումբ: Կարգադրութեանց տեղեկագրութիւնը ինչպէս համաժողովին բացման ժամը պիտի հրատարակուի յարմար ժամանակին, տեղական թերթերու միջոցաւ ի գիտութիւն հանրութեան: Համաժողովը ինք պիտի կազմէ իր դիւանը, և նիստերն ընդհանրապէս բաց պիտի ըլլան ժողովուրդին, ի բաց առեալ երբ Պատուիրակները որոշեն մասնաւոր նիստեր ունենալ դռնփակ:

Վստահ ըլլալով թէ Ամերիկայի Հայութիւնը գործնականապէս պիտի պատասխանէ այն հրահրին, որով Հայ Ազգին մէջ ընդհանուր համերաշխութեան դարաշրջան մը պիտի բացուի:

Ի դիմաց Հնչ. Ազգ. Յեղ. Կուսակցութեան Ամերիկայի Մասնաճիւղերու ԺԳՐԳ Պատգ. Ժողովին:

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ (ԿՆԻՓ)

3 Սեպտեմբեր 1900

Յ. Գ. Նկատելով թէ երկրին հեռաւոր մասերուն մէջ բնակող գաղութները յատուկ Պատուիրակներ ղրկելու դժուարութիւններ կրնան ունենալ, կը թելադրուի որ այդպիսի գաղութներ իրենց փոխանորդ պատուիրակներ նշանակեն յարմարագոյն վայրերէն (Նոյն)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

ՀԱՆԳԱՆԿՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ—Հայկական Յեղ. Միութեան Պօլոյ Կոմիտէին բացած հանգանակութեան մասնակցելու համար երկու երիտասարդներ վերջերս Սթէնք հասնող պ. Զ. Գոչեան և Ա. Թէնքի Հայ գաղթականութեան անդամներէն պ. Յակոբ Կարապետեան Աթէնքի և Պիւրէօնի 50-60ի չափ հայերէն շուրջ 160 Տրաքիի գումար մը հաւաքելով Փարիզ պ. Յ. Իսթէնտէրի ղրկած են: «Միութիւն»ը հրապարակաւ իր ուրախութիւնը յայտնելով այս երկու երիտասարդներու գովելի ձեռնարկին համար, հրաւիր կը կարգայ արտասահմանի Հայ երիտասարդութեան ամենուրեք հետեւիլ անոնց օրինակին:

«ԱՐՄԵՆԻԱ»Ի ՎԵՐԵՐԵԻՈՎՄԸ—Նւթակա անձկութիւնը ստիպած էր պ. Մ. Փորթալ-գալեանը 3-4 ամիսի չափ ընդհատել իր թերթին հրատարակումը: Ուրախութեամբ կաւետենք թէ «Արմէնիա»ն սկսուած է վերստին հրատարակուիլ: Պ. Փորթալ-գալեան Հայ Յեղափոխութեան ամենէն հին ղիւնուորներէն մէկը ըլլալով, արժանի է Հայ ազգին բաշակրութեան ու համակրութեան:

Բարիգի (Բաթրի) թերթը՝ հեռեւեալ հետաքրքրաշարժ հեռագիրը կը հրատարակէ:

Մի քանի օր առաջ անձանթ մարդ մը Պարչեւնի (Սպանիա) թուրք հիւպատոսին ներկայանալով ծածկագրութեան բառարանը կը պահանջէ սր Սուլթան Համիտին հեռագրաւ:

Հաղորդէ կարեւորագոյն լուր մը, զոր միայն ինք գիտէ և ուրիշին չի կրնար խոստովանիլ: Բառարանը կը յանձնուի անձանթին, որ անմիջապէս կը հեռագրէ Սուլթանին հետեւալը «Զերդ վեհափառութիւնը սպաննելու խորհրդով մի քանի շաբաթներէ հետէ Պօլիս կը գտնուի վեց անխնայականներ, որոնց մէջ կը գտնուի նաեւ Հումայէթօ թագաւորի ըսպաննիչ Պրէսիի եղբայրը: Ի պահանջիւ հարկին կարող եմ Պօլիս գալ և ցոյց տալ Զեդ «այդ անձերը, եթէ կանխաւ հոս վճարուի ինձ 180 ոսկի:

Պարչեւնի թուրք հիւպատոսն անմիջապէս հեռագրական հրաման մը կը ստանայ Սուլթանէն որ այդ անձանթին վճարէ 180 ոսկին, խոստանալով միանգամայն 400 ոսկի ևս վճարուի իրեն, եթէ խոստումը յարգէ:

Հեռագիրը չի յիշեր թէ խնդրը ո՛ւր հասած է, սակայն կերեւի թէ անձանթը Սուլթանը ծախքի ենթարկելէն զատ սարսափի մէջ ալ ձգած, ու 180 ոսկին գըրպանելէն իվեր կը շարունակէ անձանթ մնալ:

— Սեւանիկի ղիւնուրական հրամանատար Օսման փաշա՝ իր վեհապետին կողմէ իբր Ժէօն թուրք կապաճելի նկատուելով, ընտանիքով Մարսէյլ փախած է. հանրածանօթ Մահմուտ փաշա՝ Փարիզի մէջ ընդունած է բարձրաստիճան փախստականը:

— Աթէնքի Օսմ. Դեսպանատունը պաշտօնապէս կը հերքէ այն լուրը թէ՛ Հայերը Ժէօն թուրքերու հետ միանալով Սուլթանի կեանքի դէմ դաւադրութիւն մը ռարած են:

— Անգլիա՝ Թրանսվալի պատերազմին մէջ մինչեւ ցարդ 43 հազար կարուստ տուած է, բացի հիւանդանոցի մէջ դարմանուող վիրաւորեալներէն:

— Միութիւն»ը մամուլ տակ դրուելու պահուն կարեւոր թղթակցութիւն մը կատանաք պօլսէն: Դժբաղդաբար տեղի սղութեան պատճառով չենք կրնար հրատարակել զայն ամբողջովին, հետեւեալ մասերը միայն կը քաղենք ատկէց:

«7-8 ամիսներէ ի վեր ուսիականութիւնը կատաղի հայածանք մը կը մղէ պ. Զարեհ Գոչեան աւուս Յեղափոխականի մը դէմ. զոր չէ կրցած դեռ ձերբակալել. և կը կարծուի թէ հեղինակն ու պետն է պօլսոյ մէջ հայ յեղափոխականներու կողմէ ըլլալիք ինչ ինչ ձեռնարկներու և գործողութեանց: 500է աւելի անմեղ հայեր ձերբակալուած են, որոնցմէ 200ի մօտ արսորուած գուռաւները: Այս անմեղներու մէջ կը գտնուին պ. Ալեքսան Արզուեան և Օր. Աննիկ Սրմաքէչեան՝ նախկին Հնչկն. Յեղափոխականներ, որոնք բանտին մէջ աներեւակայելի տանջանայ կենթարկուին: Հոստատուած է սակայն թէ ասոնք ո՛ր և է Յեղափոխական գործերով չեն զբաղած և ո՛ր և է յարաբերութիւն չեն ունեցած պ. Զ. Գոչեանի հետ՝ հակառակ ոստիկանութեան կամաւոր և ծաղրելի ենթադրութեանց: Ազգ. Պատրիարքարանի բողարած Գափու Քէհեասինները՝ Տէր-Ներսէսեան և Արթին՝ մեղսակցութեամբ չէյն Օրմանեանի եւ չիք Տատեան Արթին բաշխիլ կը կեղեքեն խղճ բանտարկեալներն ու անոնց պարագաները, սուտ ու փուտ խոստումներ ընելով զանոնք ազատելու: Տէր տեսցէ և այց արասցէ»:

«Միութիւն»ը իր զարմանքը չի կրնար զսպել թուրք ոստիկանութեան ապուշութեան վրայ. պ. Զ. Գոչեան 6-7 շաբաթներէ իվեր Աթէնք կը գտնուի ու իր ներկայութիւնն ալ յայտարարած է թուրք ղեսպանաւան ու հիւպատոսարանին, խնդրելով հեռագրել պօլիս որպէսզի դադարեցունեն անիմաստ հալածանքները:

9 ամիս առաջ Կրետէն Եղիպտոս մեկնող Ակնցի խոհարար Հայ-Հոռոմ Եօրաան Սթաւրիտիէն կը խնդրուի որ իր հասցէն ի, մացնէ Ամերիկա իր բարեկամի հետեւալ հասցէին — Յարութիւն Իսրայէան

192 Սթէպէն ՍԲԵԹ 192

(Ամերիկա) Պրիմօրթ Գօնն.